

ՓՐԿՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԿՆ ԵՆ ԴԵՆԵՐԱԼ ԲՈՒԹ՝

Այս անունները զարթեցնում են կրկին իմ անցեալ տարուայ ամենակենդանի յիշողութիւններից մէկը: Մի քանի տարի առաջ նոքա աւելի յաճախ էին յիշուում արտասովոր բաներ էի լսել նոցա մասին և հետաքրքիր էի միշտ մօտիկից ծանօթանալ այդ անունների հետ կապուած շարժման: Մի անգամ հարաւային Պերմանիայում գիշերը երկաթուղով գնալիս նստած էի շատ հասարակ և դեռ իմ չտեսած, զինուորականի հագուստով մի երիտասարդի հետ՝ ձանձրութիւնից խօսակցել սկսանք՝ երիտասարդը անգլիական ծագումն ունէր, բոլորովին անսպասելի կերպով յայտնուեցաւ որ նա յաւ ուսումնասիրել էր շրճակայ ժողովուրդի կրօնական-բարոյական վիճակը գիտէր բազատրել նորա փառքնոր կողմերի պատճառը և յարգելի խոհական միջոցներ առաջարկել նոցա բարուղեւուն համար: Իմ հարցին թէ ինչի՞ նշան է նորա կրած համագգետոր՝ պատասխան եղաւ. «Փրկութեան բանակի զինուորի»: Մինչև այդ ժամանակ ես այդ անունն ներքոյ մի տարօրինակ աղանդ էի ծածկուած համարում. երիտասարդը ինձ յարգանք ներշնչեց թէ դէպի իւր անձը և թէ դէպի այն հաստատութիւնը որին նա պատկանում էր:

Ի տեղոյ գայուց յետոյ, որ Փրկութեան բանակի կեդրոնավայրն է, բնականաբար կամեցայ հետաքրքրութիւնս զոհացնել և ուղղակի գիմեցի դէպի մայր հաստատութիւնը: Պա մի ահագին տուն է, ուր բնակուում է ինքը Պաներայ Բուլթ, Փրկ. Բանակի հիմնադիրը և հրամանատարը մինչև այժմ, ուր բազմաթիւ գրասենեակներից պատուէրներ են եկնում դէպի աշխարհիս ամեն կողմերը և տեղեկութիւններ ժողովուում: Ինձ արտասահմանեան բաժնի գլխաւոր կառավարչի մօտ տարան, որ սիրալիր կերպով ընդունեց և սպաներից մէկին պատուիրեց բոլոր հաստատութիւնը ցոյց տալ: Իմ բազդից յաջորդ օրն և եթ գեներալի ծննդեան 70-ամեայ տարեգարձն էր, որ պէտք է մեծ հանդիսով տօնուէր, առաջնորդս խոստացաւ ուղեկցել ինձ դէպի հանդիսավայրը, որ և կատարեց: Ի տեղոյ ամենամեծ սրահներից մէկում ժողովուում էին Փրկութեան Բանակի սպաներն ու զինուորները՝ այր և կին, և բազմաթիւ հանդիսատեսներ: Եղօթքներով և զոհաբանական երգերով սկսաւ հանդէսը. աննկարագրելի է այն ոգևորութիւնը, որ տիրեց ժողովականներին, երբ բեմի վերայ յայտնուեցաւ

յորեւարը. միջահասակ, երկայն մօրուքով, սուր դէմքով և սրահայեաց մի պատկառելի ծերունի, դեռ բոլորովին ժիր և առողջ տեսքն արդարեւ մի հրամանատարի: Նա բարձր գասակարգից է և կարծեմ զինուորական մի կարեւոր պաշտօնի մէջ է եղել: Նորա ձեռնարկութեան խորհուրդն բմբռնելու համար փոքր ի շատէ ծանօթ պէտք է լինել այն խնդիրներին, որ արդի քաղաքակրթուած աշխարհի հասարակական կեանքի, համայնական կազմութեան հետ կապուած են:

Նոյն մեքենան, որ միջոց է տալիս գործարանատիրոջ իւր պայատներում հանգիստ և փարթամ կեանք վարել, որ արուեստի արդիւնքներով զարդարում է վաճառանոցներն և թագաւորի ապարանքից սկսած մինչև յետին գիւղացու տունը, որ մեր դարու պարծանքն է կազմում քաղաքակրթութիւն, առանձին և հրապարակային կեանքը շարժման մէջ դնող գրխաւոր լծակն է: Նոյն այդ մեքենան իւր ահռելի անիւների տակ ծնշում, հալեցնում է անթիւ բանուորների և ամենաթշուառ կացութեան մէջ գնում նոցա: Քչերը, գրամատերերը, վայելում են իսկ մեծամասնութիւնը, ձեռքի աշխատանքով ապրող գասակարգը, պէտք է անընդհատ մաքառէ իւր օրական ապրուստը հայթայթելու համար: Սակայն այս գասակարգը այլ ևս սեփական կամքից գուրկի անուսումն մի ամբօխ չէ, որ քաճ կողմը գրնայ. Եւրոպայում գրեթէ ամեն տեղ պարտագիր ուսումը նորան որոշ չափով կրթութիւն, ինքնաձանաչութիւն է տալիս, աչքը բաց անում և սովորեցնում իւր գոյութեան, իւր վիճակի մասին հաշիւ տալ իրեն: Եւ նա տեսնում է, թէ իւր շուրջը ինչ է կատարուում թէ ի՞նչպէս գործարանատէրը իւր զրամագրի շնորհիւ աշխատութեան բոլոր արդիւնքը ինքն է վերցնում և նորան իսկական աշխատաւորին, ամենաշնչին վարձ միայն տալիս, իւր խղճալի կեանքը պահելու և իրեն մեքենայ ուրիշների համար աշխատելու ուստի նա դժգոհ է իւր գրութիւնից: Ուսմկավարների ամբօխի տրամագրութիւնից օգուտ քաղող, նորա կրքերը շոյող ամեն կարգի խաբերաներն էլ անպակաս են, որ աւելի և աւելի են արծարծում նորա դժգոհութիւնը. բացի հարուստներից նոքա զրգուում են նորան ամեն տեսակ արտաքին և բարոյական հեղինակութեանց, իրեն հարստութեան պաշտպանների դէմ և ահա այդպիսով յառաջ է գալիս մի դրութիւն, որ սպառնում է ամբողջ քաղաքակրթ աշխարհը տակնուվրայ անելու, որ այսօր Եւրոպայում թէ քաղաքագէտների և թէ առ-

Հասարակ ամեն մի մտածող մարդու գրադման զգեստը խնդիրն է կազմում: Բնական է, որ այն տեղերում ուր աւելի զարգացած է գործարանական կեանքը, այս խնդիրն էլ աւելի մեծ տաղնապ է յառաջ բերում: Լոնդոնը, այդ, ինչպէս և ուրիշ շատ կողմերից առաջին տեղն է բռնում աշխարհում: Եւրոան կարելի է երկու գրեթէ հաւասար մասերի բաժանել: Հարաւ-արեւմտեան բաժինը մեծ մասամբ մեծատունների բնակավայր է, ծառաստանների փաճառանոցների, հասարակաց և քաղաքային հիմնարկութիւններով զարդարուած: Հիւսիս-արեւմտեան մասը բնակութիւն է աւելի աղքատ դասակարգի՝ գործարանների, աշխատաւորների շարժման կեդրոն: Թշուառութեան մի ծով է սա, ուր շատ բան առանց սարսուռի տեսնել չի կարելի, այստեղ կան փողոցներ, ուր նոյն իսկ ցերեկը մենակ անցնել փառագաւոր է, ոչ մի տեղ ես այնպիսի սարսափելի կեղտոտութիւն և ծայրահեղ աղքատութիւն չեմ տեսել, որպիսին երեւում է այստեղի միատեսակ ազիւսաշէն, մոայլ արտաքինով տների դռներից: Եւթեական չքաւորութեան հետ յաճախ կապուում է նաև բարոյական սնանկութիւնը, արտաքին պայմանների դէմ կռուելու անկարող մարդիկ աշխարհից յուսահատ, անբարոյականութեան, մոլութեան գիրկն են նետուում արեւելութեան, ամենաստորին կրքերի յագեցման մէջ բաւականութիւն և մոռացութիւն որոնում: օրինակը ազդում է, կոհակ կոհակ զարգանում է ախար և ամբողջ համայնքներ կրակել սպառնում: Եւս այստեղ կրկին օգնութեան ձեռք է մեկնում եկեղեցին, քրիստոնէութիւնը: Լոնդոնի այս քաղաքամասերում մեծ քանակութեամբ բարեգործական հաստատութիւններ կան, որ ահագին ջանք են գործ դնում բարեխաւել ըստ կարելւոյն խեղճերի, անկեանքների վիճակը, նոցա նիւթական նպաստներ մատակարարելու միջոցների մասին հոգալով հանդերձ՝ ազատել շատերին բարոյական մահից:

Եւսպիսի միջոցներից մէկն է նաև, որ մտածել է գններալ Բուլթ, և որ այսօր ընդարձակուելով գրեթէ համաշխարհային բնաւորութիւն է ստացել: Եւս հետեւում է անշուշտ այն սկզբունքին, որ մարդու իսկական գոբարդութեան պատճառը նորա վերայ ծանրացող մեղքն է և ուրեմն մի դրական օգնութիւն հասցնել կարող է նորան և այժմ այն միակ զօրութիւնը աշխարհիս վերայ, որ մեղքի դէմ կռուում և մեղքը վերցնում է, այդ է փրկութեան աւետարանը, քրիստոնէական հաւատն ու բարոյականութիւնը: Որովհետև


ինքը մեղքը մի մեծ ոյժ է կազմում, որ ամեն տեղ իւր զինուորներն ունի, մի աւերող զատրաստի բանակ՝ Բուլթն էլ իւր գործունէութեան բանակի ձեռք տուել, Քրիստոսի զինուորը՝ զաղափարը արտաքին նշաններով և սարայայտել կամեցել: Ինքը լինելով այդ բանակի ֆէլէւալ, զօրավարը, նա իւր ձեռքի տակ ունի զանազան աստիճանի սպաներ, իսկ սոցանից իւրաքանչիւրը որոշ թուով զինուորներ, որոնք բոլորն էլ միատեսակ համազգեստ են կրում: Լոնդոնից սկսած ցրուում են սոքա գէպի աշխարհիս ամեն կողմերը, մանում են գործարաններ, արհեստանոցներ, գինեւոներ, ցոփութեան նկուղներ՝ ամէն տեղ, ուր մարդիկ իրենց կրքերին անձնատուր անընդունակ են դառնում ազնիւ աշխատանքի ազնիւ կեանքի համար և հրաւիրում են նոցա զըզալ իրենց մեղքերը, քաւութիւն խնդրել աշխարհի Փրկից և Եւրա անունով փրկուած մարդավայել կեանք վարել այնուհետև, աւետարանը բնարել իրեւ կեանքի միակ ճշմարիտ ուղեցոյց և աշխատել ուրիշ իւր նման անկեանքներն էլ նոյն ուղղութեան ճանապարհի վերայ բերել: Եւսպիսով Փրկութեան Բանակը մի նոր տեսակ առաքելութիւն է ներկայացնում: Եւսիջական կապ չունենալով ոչ մի եկեղեցու հետ, նա դաւանութեան ազատութիւն է տալիս իւր հետեւողներին, որոնցից միայն որոշ կանոնների գործադրութիւն է պահանջում և որոնց համար նա ինքը որոշ միաբանական ազօթքներ, համայնական կազմակերպութիւն ունի տուած: Եւս ամենի մէջ նա աշխատում է հետեւող լինել նախնի քրիստոնէութեան և յիւրաւի երբ իմ առաջ բեմի վրայ կանգնած խօսում էր գնեւրալ Բուլթը և նորա ամեն մի բուռն ներշնչութեամբ լի խօսքը ընդհատուում էր ոգևորուած բացականչութիւններով, երբ տեսնում էի շուրջս թէ ինչպէս երկրասարդ մարդիկ կուրծքները ծեծելով „Blessed Saviour“ (օրհնեալ Փրկիչ) էին աղաղակում և անկեղծ սրտով լի զգացմամբ զոհաբանում: Եւսպիսի իրենց գտած փրկութեան, անցեալի բաղդատմամբ ներկայի երջանիկ վիճակի համար, երբ կանայք յափշտակուած ծունկի էին դալիս, ազօթում այնպիսի ձայնով, որ մի ասպարէզ հեռաւորութեան վերայ լսելի պիտի լինէր՝ ինձ թուում էր թէ քրիստոնէութեան նախնական դարերում ապրող մի էնթուզիաստ շրջանի մէջ եմ փոխադրուած, մի մոնտանական՝ համայնքի մէջ, նոյն մարգարէներն ու լեզու խօսողներն

եմ տեսնում առջևս—Անտարակոյս այս բո-
լոր շարժման մէջ կասկածաւոր կողմեր շատ
կան, արտաքին ձեւերին մի առանձին նշանա-
կութիւն տալը եկեղեցուց բաժան լինելը,
տեղի անտեղի ոգեւորութիւնը՝ դոքա այնպի-
սի տարրեր են, որ հեշտութեամբ եղծուիլ և
ազանդաւոր կերպարանք ընդունել կարող
են։ Քանի դեռ կենդանի է գեներալ Ռու-
թը, նա իւր հեղինակութեան ներքոյ միաց-
նում ողի է ներշնչում բոլորին, մի ընդ-
հանուր կարգ ու կանոնի տակ պահում։ Նորա
մահից յետոյ հաւանականօրէն պառակտում-
ներ կրննան սկզբնական ոգեւորութիւնն էլ,
որ արդէն զգալի կերպով նուազելու վերայ է,
հետզհետէ կսպառի։ Սակայն այդ ոչինչ չէ
նշանակում։ Փրկութեան Բանակը այնու ամե-
նայնիւ իւր կոչումը կատարած, մի նշանաւոր
գործ դուրս հանած կլինի, նա արդարեւ փր-
կարար գաղափարներու մարտը օգ է ներս բե-
րում յաճախ այնպիսի միջնորդութիւն մէջ, ուր
աւելի կանոնաւոր հիմունքների վերայ դր-
ուած և լուրջ սկզբունքների հետեւող մի հաս-
տատութիւն հազիւ թէ կարողանար մուտք
գործել։ Աորա նպատակն է ամբօխի, մասսա-
յի վերայ ներգործել և այդ տեսակետից նա
այնպիսի մի յարմար միջոց է, որպիսին անգ-
ղիացու գործնական խեղճը միայն, քրիստոնէ-
ական ջերմ զգացման հետ զուգորդուած, յա-
ռաժ բերել կարող էր։ Թէ արդարեւ որքան
մեծ է նորա ազդեցութիւնը ամբօխի վերայ,
այդ կարելի էր պարզ տեսնել վերեւ նկարա-
դրուած հանդիսի միջոցին։ Թէ գեներալի և
թէ նորանից յետոյ եկողների ճառախօսու-
թեան ժամանակ ամբօխից բաժանուում, լալով
զալիս բեմի առաջ էին չորում տասնեակ զրդ-
ջացեալների, այր և կին, խնդրելով իրենց Փր-
կութեան Բանակի մէջ առնել. իւրաքանչիւ-
րին մօտենում էր իսկոյն հին անդամներից
մէկը, մխիթարում և սիրտ տալիս, նորա ա-
նունը ցուցակի մէջ անցնում։ Այսպիսիները
մի քանի ամիս դեռ փորձի են ենթարկուում.
մեծ մասամբ նոքա, ինչպէս նկատուեցաւ,
բանուոր դասակարգից լինելով, մի որ և է աշ-
խատութիւն են ստանում ընկերութեան բա-
ցած արհեստանոցներում և աշխատութեան
տներում, մինչև որ գործի ընդելանան, հաս-
տատուին իրենց ընդունած նոր գաղափարների
մէջ և ընդունակ դառնան մի աւելի ազնիւ,
բարեբարոյ կեանք սկսելու։ Աոցա աշխատա-
ծը մնում է առ հասարակ ընկերութեան սե-
փականութիւն և նոքա այնուհետեւ էլ կապ-
ուած են մնում բուն Բանակի հետ և միշտ
գործակից նորան։

Իւր ընաւորութեամբ և մանաւանդ այս
վերջին կետերում փրկութեան բանակից որոշ
կերպով տարբերուում է նորա հետեւողու-
թեամբ կազմած եկեղեցական ընկերակը (Church
army), որի կեդրոնը նոյնպէս Անգլոնն է և
որ միայն մի քանի ուրիշ անգլիական գործա-
բանական քաղաքներում քիչ տարածուած է։
Ինչպէս անունը ցոյց է տալիս, սորա պահո-
ղըն արդէն անգղիական եկեղեցին է, որի նը-
պատակն է եղել Ռութի գաղափարները աւե-
լի լուրջ և զրական միջոցներով իրագործել։
Սա էլ ունի իւր մարդիկը, որոնք ամբօխի մէջ
են մտնում, դուրս կորզում այնտեղից արեւ-
ցութեան, մոլութեան մատնուած ծոյլերին աշ-
խատանք տալիս նոցա, յատուկ պատրաստուած
մատուոնների և ընթերցարանների մէջ կրօ-
նական բարոյական զգացումներ ներշնչում նո-
ցա, աշխատում նոցա սրտին և մտքին հոգե-
ւոր սնունդ մատակարարել։ Իսկ ընկերու-
թեան գործատներում նոցա աշխատած դրամը
պահուում և շահեցուում է, որպէս զի որոշ
ժամանակը լրանալուց յետոյ, երբ արդէն ըն-
նակի վարիչները կհամոզուեն, որ նա կարող է
այլ ևս անկախ ինքնուրոյն կեանք վարել, այդ
պատրաստի գումարը ստանալով՝ միջոց ունե-
նան մի նոր բան ձեռնարկելու։ Այստեղ ար-
դէն գործունէութիւնը այնպիսի մեծ ծաւալ
ունենալ չէ կարող ինչպէս Փրկութեան բա-
նակի մէջ, ոգեւորութիւնը այն նշանակութիւ-
նը չունի, ազդեցութիւնը այնպէս ընդհանուր
չէ, կոչումը լինում է առանձին առանձին ան-
հատների և ոչ թէ ամբօխի համար։ Աորա
փոխարէն այստեղ բռնած ճանապարհն էլ ա-
ւելի ապահով է. մինչդեռ այնտեղ փրկեալ-
ների դարձը խումբ խումբ լինելով՝ անտարա-
կոյս շատ յաճախ է պատահում, որ փրկեալ-
ները մի երկու շաբաթ յետոյ կրկին ի-
րենց առաջուայ կեանքին դառնան. այստեղ
առանձին ուշադրութիւն են դարձնում, որ
գործի ընդունակ, դեռ բոլորովին սիւսացած մար-
դիկ ընտրուին և մինչև որ երկար ժամանակ-
ուայ փորձով հաստատուն բնաւորութիւն չը
ստանան, դուրս չթողուին։ Թէև Եկեղեցա-
կան Բանակի մէջ զլխաւոր ծառայողները հո-
գեւորականներ են, բայց նորա գործը աւելի
պակաս կրօնական բնաւորութիւն ունի. իրրեւ
համալսարանական կրթութիւն ստացած մար-
դիկ, նոքա ի հարկ է աւելի շրջահայեաց են,
աւելի գործնական նպատակների համար են
հոգում։ Պէտք է նկատել սակայն այն վերին
աստիճանի գովելի երևոյթը, որ Անգլոն քա-
ղաքը, ինչպէս և ամբողջ անգղիական ժողո-
վուրդը, բազմաթիւ մեծ ու փոքր դաւանու-

թիւնների, աղանդների, ընկերութիւնների վերայ բաժանուած լինելով հանդերձ՝ համեմատաբար շատ քիչ առիթ է տալիս կրօնական վեճերի և հակառակութեանց։ ամէն մէկը գնում է իւր առաջ դժած ճանապարհով, առանց միւսներին խանգարել ջանալու և ընդհակառակն՝ հարկաւոր դէպքում միանալով ընդհանուր թշնամու։ օր աւուր աճող անհատութեան և անբարոյականութեան դէմ։

Կ. Վ.



ԳՐԱԿԱՆԿԱՆ—ՊԵՏՄԱԿԱՆ

Ս. ԷԶՄԻԱՅԻՆԸ ՀԱՅ ԵՐԳԻՉՆԵՐԻ ՏԱՂԵՐՈՒՄ.

Ա.

Սերացականը կամ աննիւթը դժուարութեամբ է պատկերացնում ժողովուրդը, ուստի և եթէ մի ժողովուրդ զուրկ չէ վերացական գաղափարներից, նա զրանց մարմին է տալիս և արտաքին, ղգայական աշխարհում տեղաւորում։ Այս փաստն ամէն քայլափոխում ստիպուած է արձանագրել ժողովրդական հոգեբանութիւնը։ Հայ ժողովուրդը ոչ միայն զուրկ չէ եղել և չէ գաղափարականից, այլ նա նահատակ է իւր գաղափարների, յաւիտենական ճշմարտութիւնների։

Արտաքին և ներքին պատմագրութիւններից ստուգապէս արձանագրուած ճշմարտութիւն է, որ հայ ազգը քրիստոնեայ ազգերից հնագոյնն է։ Նոյնքան ստոյգ մի ճշմարտութիւն է և այն, որ հայ ազգը ամէն ինչ զոհել է ի սէր քրիստոնէութեան և այսօր մենք եւս ոչ մի այլ ազգ եմբանայ զէ կրօնական հաւատքով, հայ ազգն է միայն, որ հարեւրներով և հաղաքներով նահապաղներ է Կալիս Բերքառի վարդապետութեան հետեւով։ Ի պատիւ մարդկութեան պիտի խոստովանենք, որ այնպիսի ժամանակի մէջ ենք ապրում, երբ քաղաքակիրթ ազգերը զբաղուած են քրիս-

տոնէութեան գաղափարի համար նահատակուած հայերով։

Ի՞նչպէս է արդ, որ հայ ժողովուրդը նիւթական և բարոյական թշուառութեան մէջ դեռ չէ մոռացել վերացական վեհ գաղափարներն և դեռ ընդունակ է զոհելու զրանց համար։ Ո՛վ ուսումնասիրել է հայ ժողովրդի կեանքը, նա գիտէ, որ ո՛ր էլ լինի հայը, աշխարհիս որ անկիւնն ևս ձգէ նրան հալածանքի, նա կանգնում է իւր համար մի տաճար, մի քարէ մատուռ, որ մարմնացումն է նրա հոգեկան բոլոր բարձր գաղափարների։ Եկեղեցին անբաժանելի է հայ համայնքից, այս խոստովանում են և օտարները։ Այդ եկեղեցին է ահա, որտեղից հայն սպասում է ամէն բարիք։ Այդ եկեղեցին է, որի մէջ կենդրոնացնում է հայը աստուածաշունչ տութեան, սրբութեան հայրենի առաքելութիւնների գումարը։

Նոյն այդ եկեղեցին է միւսնոյն ժամանակ այն շղթան, որ կապում է ցրուած հայերին և յիշեցնում է ամենայն օր իւր մէջ աղօթողներին՝ թէ նրանք ունին հեռաւոր և կարօտ եղբայրներ, որոնց համար պէտք է աղօթել։ Այսօր այդ եկեղեցին յիշեցնում է աշխարհիս չորս կողմում ցրուած հայերին, որ նրանք մի ընդհանուր կենդրոն ունին, մի տաճար ունին, որի մէջ «Զագեսաց մեղ լոյս է Զայասթան աշխարհի»։ Իւր հայրենի երկրից հեռու, մայրենի բարբառը մոռացած, օտար կեանքով ապրող հայն մի սրբավայր միայն յիշում է, որ թունգ է հանում նրա սիրտը և հաղարամեայ անցեալից գոնէ մի մասն է յիշեցնում։

Ս. Էջմիածնի այս առկայծող յիշատակը նման չէ՞ արդեօք փառաւոր ճրագալոյցից մնացած մի աղօտ ճրագի։

Այս աղօտ ճրագն անգամ զօրաւոր հողմերից մարելու և ձէթի պակասութիւնից հանդիմանալու վտանգի մէջ է եղել միշտ։ Չորհակալ լինենք այն անհատներին, որոնք իրենց հոգու կրակից միշտ փոխ են տուել